G.S. GRIGORYAN

THE ROLE OF HEALTH CARE IN THE PROFESSIONAL ORIENTATION OF LABOUR RESOURCES

The problems related to the impact of the health care on the professional orientation of labou resources are analyzed. The role of health care on the regional and cross-sectoral allocation of labor resources, and its economic efficiency are distinguished.

Keywords: labor market, distribution of labor resources, professional orientation, health care impact on the professional orientation, economic evaluation of the health care efficiency.

ՀՏԴ 004:329.7

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ

20-րդ դարի երկրորդ կեսին տեղեկատվական բնագավառում կայացածած հեղափոխությունը քաղաքական դաշտի փոխակերպման համար մեծ նշանակություն ունեցավ: Տեղեկատվական ու հաղորդակցման նոր միջոցները, ակտիվորեն ներգրավվելով քաղաքականության մեջ, ոչ միայն որակապես ձևափոխեցին, այլ նաև հիմնավորապես ջարդեցին շատ պատկերացումներ ու կարծրատիպեր: Դիտարկվում են քաղաքական գործընթացների զարգացման մեջ տեղեկատվական միջոցների ազդեցության դերակատարությունն ու նշանակությունը:

Առանցքային բառեր. տեղեկատվական ու հաղորդակցման միջոցներ, «էլեկտրոնային հանրույթ», քաղաքական գործընթացներ, ապատեղեկատվություն, տեղեկույթի փոխանակում:

Քաղաքական դաշտի փոխակերպման և զարգացման համար մեծ դերակատարություն ունեցան տեղեկատվական քաղաքական շուկայում էլեկտրոնային լրատվական միջոցների երկխոսությամբ քաղաքական կոմունիկացիաների հանդես գալը, տեղեկույթի փոխանցման կտրուկ արագացումը, «էլեկտրոնային հանրույթի հանդես գալը և այլն: Հասկանալի ու բնական է, որ նման երևույթները որակապես փոխեցին ու շարունակում են փոխել քաղաքական իշխանության համար մղվող պայքարի պայմաններն ու հնարավորությունները: Անշուշտ, ինչպես նշել է Լիպպմանը, տեղեկատվական միջոցները ունակ չեն «…ողջ ծավալով փոխհաղորդել մարդկանց հասարակական կյանքը այնպես, որ յուրաքանչյուր անհատ կարողանա ներդնել ցանկացած հարցի նկատմամբ իր հեղինակավոր կարծիքը [1]: Նույնիսկ ավելին, տեղեկատվական տեխնոլոգիաները

իրենց ներդրումը ունեցան «հասարակական կապիտալի» անկման գործում այն առումով, որ հեռուստա-տեսա-աուդիո-մուլտիմեդիա զվարճանքները մարդկանց համար լայն հնարավորություններ ստեղծեցին՝ բավարարելու իրենց կարիքները, էմոցիաները առանց տնից դուրս գալու՝ դրանով իսկ նպստելով նրանց պասիվությանը և հակադարձ կապի հնարավորությանը:

Հարկ է նշել, որ նոր տեղեկատվական և հաղորդակցման միջոցները ակտիվորեն ներգրավվելով քաղաքականության մեջ՝ ոչ միայն որակապես ձևափոխեցին, այլ նաև հիմնավորապես ջարդեցին շատ կարծրատիպեր, պատկերացումներ, անհատների և խմբերի, քաղաքական ինստիտուտների և կառուցվածքների միջև փոխհարաբերությունների մոդելներ և այլն:

Արժևորելով տեղեկատվական ինովացիաների հետևանքները՝ Ռ. Դալը նշել է, որ «հեռուստահաղորդակցության տեխնոլոգիաները կարևոր դերակատարություն են ունեցել առաջավոր դեմոկրատական հասարակության ստեղծման գործում, որի պարագայում, քաղաքական որոշումները հենվում են ժողովրդի կարծիքի վրա [2]: Ընդհանրացնելով մի շարք տեսակետներ՝ Թոքվիլը «հեռուստադեմոկրատիան» ձևակերպեց որպես «տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով հասարակական բարօրություն» [3]:

Կարելի է նշել, որ հաղորդակցման նոր տեխնոլոգիաների զարգացումը իր հետ առաջ է բերում դեմոկրատիայի երրորդ մեծ ժամանակաշրջանը, որը իր շրջանակներում կընդգրկի առավել լայն զանգվածների, կնպաստի բաց, ազատ հասարակության ստեղծմանը՝ զերծ կարծրատիպերից ու պայմանականություններից: Մեր կարծիքով, այն կարելի է համարել գլոբալացման գլխավոր բաղադրիչներից ամենակարևորը: Այս առումով առավել կարևորվում է ինտերնետի դերակատարությունը, ինչը հնարավորություն ունի ապահովելու իշխանություն-ժողովուրդ անմիջական կապը՝ նվազագույնի հասցնելով քաղաքացիների կախվածությունը տարբեր չինովնիկներից, շահագրգիռ խմբերից և այլն: Այս հանգամանքը բնական է, քանզի հենց ինտերնետն է տեղեկատվական հեղափոխության շարժիչ ուժը: Թեև գլոբալ կապի քաղաքական հետևանքները միանշանակ չի կարելի գնահատել, սակայն մի բան պարզ է, որ այն իսկական պայթյուն առաջացրեց քաղաքական գործընթացների ավանդական ինստիտուտներում և մեխանիզմներում: Բնականաբար, դրանց շնորհիվ են այսօր բարձրացել քաղաքական գործընթացների արդյունավետությունը, դինամիզմը և պլյուրալիզմը: Եվ դա բնական է, քանզի, Ինտերնետը համաշխարհային համակարգչային կապ է, որը միավորում է հազարավոր լոկալ պետական, կոոպերատիվ, կրթական, անհատական կապեր՝ ստանդարտ համաձայնագրերի, տեղեկույթի փոխանակման, միասնական հասցեականության հիմքով: Ստեղծվելով 20-րդ դարի

60-ական թթ., շնորհիվ տեղեկատվության և հմակարգչայնացման բնագավառում ԱՄՆ պաշտպանության նախարարության պատվերով կատարված հետազոտության /ARPA/, մոտ տասը տարի հետո հանդես եկավ լոկալ հաշվողական ցանցը, որն ազդարարեց լոկալ ցանցերի ինտեգրացման առավելությունները այն օգտատերերի համար, ովքեր կարողանում են կապվել այլ ցանցերի օգտատերերի հետ: Ինտերնետային տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված՝ արագորեն սկսեցին ընդլայնվել տարածաշրջանային համալսարանական հանրույթները, դպրոցները և մյուս կազմակերպությունները, որոնք գիտակեցին, որ իրենց առջև բացվել են ,,հիպեր տարածության,, նոր չափումներ, որը տիրապետում է մեծ պաշարի և ունակ է միավորելու միլիոնավոր օգտատերերի: Այսպես ինտերնետը դուրս եկավ ռազմական գաղտնի լաբորատորիայի պատերից և դարձավ կապի հզոր միջոց: Նրա տեղն ու դերն այն է, որ մարդկանց հնարավորություն է տալիս հանդես գալու ոչ միայն որպես սպառողի, տեղեկություններ ընդունողի, այլ նաև որպես ինքնավար աղբյուրի (գեներատորի): Լայնամասշտաբ մեդիան-ռադիոն, հեռուստատեսությունը ունակ են ապահովելու մեծ լսարան, սակայն դրանց հնարավորությունները տնտեսական, քաղաքական և տեխնոլոգիական առումով սահմանափակ են: Ինտերնետը շրջանցում է պետական սահմանները, աշխարհագրական սահմանափակումները և ընդլայնում լսարանը: Այն հաղթահարում է ռասայական, տարիքային, սեռային, ֆիզիկական արգելքները, ժամային գոտիների և օրվա կանոնակարգման սահմանափակումները՝ հանդես գալով որպես ասինքրոն կապի որակապես նոր միջոց:

Տեղեկատվական բնագավառը, ունենալով հասարակական կյանքը համակարգող և կարգավորող գործառույթ, կարողանում է ազդեցություն գործել պետության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Հարկ է նկատել, որ տեղեկատվությունը ոչ միայն հասարակության զարգացման կարևոր գործոն է՝ նրա առաջընթացի կարևոր նախադրյալը, այլև պետության անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչը:

Աշխարհաքաղաքական զարգացումները պայմանավորող կարևորագույն այնպիսի գործոններ, ինչպիսիք են համաշխարհայնացման (գլոբալացման) և ինտեգրացման գործընթացները, հրամայական են դարձնում տեղեկատվական ամբողջական համակարգի արդիականացումը և վերազինումը: Մարդկային գործունեության տարբեր ոլորտների տեղեկատվական վերազինումը, համաշխարհային տեղեկատվական դաշտում տարբեր պետությունների տեղեկատվական համակարգերի միավորումը, այդ թվում՝ գլոբալ տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերի ստեղծումը սրբագրում է հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի հետագա զարգացման ողջ ընթացքը: Հարկ է նշել,որ հենց

այս համատեքստում էլ մեծագույնս կարևորվում է տեղեկատվական անվտանգության նշանակությունը, ինչը ասոցացվում է պետության անվտանգության հետ:

Համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը, դրանց ներդրումը արտադրության մեջ մեծապես նպաստում են արտադրական գործընթացների զարգացմանն ու տեղեկատվության տեմպերի արագացմանը:

Բջջային հեռախոսները, տեսախցիկները և մյուս այլ նոր հաղորդակցման միջոցների զարգացումները թեև ընթանում են ժամանակին համընթաց, սակայն աշխարհագրական անկախության առումով դրանք դեռևս համադրելի չեն գլոբալ համակարգչային ցանցի հետ: Այլևս ինտերնետի միջոցով տեղեկույթի փոխանակումը տեղի է ունենում այնպես, որ աշխարհագրական դիրքը և ազգային պատկանելությունը՝ որպես աղբյուր և հասցեատեր, դադարել են կարևոր գործոն լինելուց: Ի տարբերություն փոստային փոքրիկ արկղի՝ էլեկտրոնային փոստային արկղը հասցեատիրոջը հասանելի է ամենուր և ամեն ժամ՝ անկախ նրա գտնվելու վայրից: Ի տարբերություն ավանդական հաղորդակցման միջոցների, որոնք ոչ միայն վերահսկելի էին պետության կողմից, այլ նաև պետությունը անմիջականորեն միջամտում էր դրանց գործերին և թելադրում, ինտերնետը ի սկզբանե ազատ էր, ինչը, բնականաբար, նոր շունչ էր հաղորդում քաղաքական գործընթացներին: Ինտերնետը լայն հնարավորություն ստեղծեց բաց հասարակության, քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Նրա շնորհիվ քաղաքական գործընթացները դարձել են ավելի դինամիկ, ինչը երբեմն առաջ է բերում նաև հակասություններ պահպանողական հասարակության և դինամիկ զարգացում ապրող քաղաքական գործընթացների միջև:

20-րդ դարի 90-ական թվականներից սկսած՝ ինտերնետի օգտատերերի թիվը սկսեց արագորեն մեծանալ, իսկ վերջին տարիներին այն արդեն դարձել է յուրաքանչյուր ընտանիքի, անհատի գործունեության անբաժանելի մասը: Ցանցի համընդհանուր հասանելիության շնորհիվ՝ այն դարձել է հասարակության օբյեկտիվության հայելին և ցույց է տալիս մարդկային բնույթի ամենաանշմար կողմերը:

Հարկ է նշել, որ նորանկախ մեր հանրապետության պատմության սկիզբը համընկավ տեղեկատվական հորձանուտի հետ, ինչը, ի տարբերություն այլ երկրների, ուներ որոշակի առանձնահատկություններ՝ արցախյան ազատամարտի և տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող երկաթյա վարագույրի հետ: Հպարտությամբ կարող ենք ասել, որ դժվարին այդ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը պատվով անցավ այդ քննությունը, ճիշտ օգտվեց ընձեռված հնարավորությունից և իրավամբ համարվեց ժողովրդավարության կղզյակ այս տարածաշրջանում:

Շնորհիվ տեղեկույթի փոխանակման տեխնիկական հնարավորությունների՝ վերջին տարիներին ինտերնետը ակտիվորեն օգտագործվում է ընտրական գործընթացների ժամանակ: Օրինակ, ստեղծելով այս կամ այն կուսակցության կամ շարժման լիդերի վեբ-կայքը /էջ/՝ ընտրարշավի կազմակերպիչները լրացուցիչ հնարավորություններ են ստանում կամավորների հավաքագրման, ցույցերի կազմակերպման համար, որոնք պատրաստ են պաշտպանելու այս կամ այն պատգամավորին ընտրողների հետ հանդիպման, ընտրական շտաբների օգնականների հրահանգավորման, կուսակցությունների և շարժումների դրամական միջոցների հավաքագրման, էլեկտորալ շուկայում մարքեթինգային գործողությունների ժամանակ:

Հարկ է նշել, որ ինտերնետը որոշ երկրներում ընտրական գործընթացներին մասնակցում է ոչ թե միջնորդավորված, այլ անմիջական, մասնավորապես՝ ԱՄՆ-ում 90-ականների կեսերից քվեարկությունը իրականացվում է ինտերնետի միջոցով: Այն ցուց տվեց, որ նմանատիպ (ինտերնետի միջոցով) քվեարկությունների իրականացումը քաղաքական կուսակցությունների համագումարներում, արհմիութենական կազմակերպություններում և այլուր ավելի արդյունավետ են, և որ «ավանդական»-ի հետ համեմատած՝ այն ավելի արագ է, տնտեսապես շահավետ և անվտանգ, ապահովված կեղծարարությունից և սխալների-ց:

Քաղաքական գործընթացներում ինտերնետը մեծապես նպաստում է նաև այս կամ այն քաղաքական գործչի իմիջի ձևավորմանը, հատկապես ընտրությունների ժամանակ, երբ սուր մրցակցության առկայությունը հաճախ անհնարին է դարձնում թեկնածուների օգտին որևէ քարոզչության իրականացումը: Բնական է, որ տվյալ դեպքում օգնության է հասնում ինտերնետը, որի միջոցով հնարավոր է դառնում այս կամ այն տեղեկությունը հասանելի դարձնել լայն զանգվածներին: Այստեղ կարևոր է շեշտել այն հանգամանքը, որ երբեմն ինտերնետի, և ոչ միայն, շարաշահումը, նրա միջոցով տարածվող ապատեղեկատվությունը հաճախ ոչ միայն չեն օգնում, այլև կարելի է վստահորեն հաստատել, որ խանգարում են գործընթացին, վարկաբեկում տվյալ քաղաքական գործչին և, բնականաբար, խաթարում քաղաքական գործընթացը: Անհրաժեշտ է ամրագրել, որ պայքարը չի կարելի կառուցել սուտ, վարկաբեկող փաստերի, գիտակցված ապատեղեկատվության վրա, այլապես այն հակառակ արդյունքը կարող է տալ, և մրցակցային պայքարը չի կարողանա իրականացնել իր առջև դրված խնդիրները:

Քաղաքական գործընթացներում հատկապես գործուն ազդեցություն ունի քաղաքական գործչի իմիջը, քանի որ այն կանխամտածված կամ վիզուալ կարծիք է ձևավորում նրա նկատմամբ: Իմիջը երկխոսության հնարավորություն է

ստեղծում քաղաքական գործչի և լսարանի միջև, որի շնորհիվ կարող են միակցվել քաղաքական գործչի և լսարանի /ապագա ընտրազանգվածի շահերը: Իմիջը հասարակական կարծիքի մանիպուլյացիայի միջոց է: Քաղաքական լիդերը շահագրգռված է իր իմիջի վերաձևավորմամբ, քանի որ գրավիչ իմիջը /տիպաժ/, որպես կանոն, արժանանում է հասարակության դրական վերաբերմունքին, ինչը մեծապես կնպաստի հաղթանակին: Քաղաքականության մեջ լիդերի իմիջը ձևավորվում է հասարակական կարծիքի միջոցով՝ ընկալելով այն որպես անհատականություն, ինչպես նաև՝ նրա ծրագրային փաստաթղթերի, հայտարարությունների միջոցով: Հանդիսանալով միջնորդ ընտրողների և քաղաքական ուժի միջև՝ շատ հաճախ լիդերը հնարավորություն չունի ամբողջովին բացահայտելու իր մարդկային կերպարը, բնականաբար, այստեղ նրան օգնության են հասնում լրատվական, տեղեկատվական միջոցները, որոնց ճիշտ կիրառումից է մեծապես կախված իմիջի ստեղծումը:

Լիդերի իմիջը ներառում է հանրաճանաչության վարկանիշը, անհատականություն ունեցող քաղաքական գործչի կերտումը, նրա աշխատելու կարողությունը զանգվածային լրատվական միջոցների հետ և այլն: Լիդերը մի կողմից՝ պետք է ցույց տա իր մտավոր ունակությունները, լայն մտահորիզոնը, որոշումներ կայացնելու, բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու վճռականությունը, մյուս կողմից՝ հասարակությանը պետք է կարողանա համոզել, որ ինքը նրանցից մեկն է, հակառակ դեպքում՝ նրան չեն համարի իրենցից մեկը, և արդյունքը գոհացուցիչ չի լինի: Բնականաբար, ոչ մի քաղաքական թիմ ինքնուրույն չի կարող այս հարցը լուծել, եթե նրան օգնության չհասնեն տեղեկատվական միջոցները:

Հայաստանի Հանրապետությունը, որպես տնտեսական զարգացման առաջնահերթություն ընդունելով տեղեկատվական տեխնոլոգիաները, դրանք ակամայից ներառել է նաև քաղաքական իրականություն, սակայն առանց կանխարգելիչ միջոցների:

Ամփոփելով կարող ենք ամրագրել.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը քաղաքական դաշտ մեծապես փոխեց քաղաքական գործընթացների թե՛ արագությունը և թե՛ որակը:

2. Նրա մուտքը քաղաքականություն դրականից զատ ունեցավ նաև բացասական ազդեցություն (ապատեղեկատվություն, վարկաբեկիչ նյութեր և այլն):

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներխուժումը հայաստանյան քաղաքական իրականություն ունի և կունենա իր առանձնահատկությունները, մասնավորապես՝ պայմանավորված ազգային հոգեկերտվածքով և տարածաշրջանային առանձնահատկություններով:

4. Ապրիլյան /2-4/ դեպքերով պայմանավորված (զինվորական տեղամասերում, խրամատներում կատարված լուսանկարներ, տեսանյութեր, հեռախոսազրույցներ և այլն)՝ պետք է որոշ սրբագրումներ կատարվեն, մասնավորապես պաշտպանական դիրքերում դրանց օգտագործման հետ կպված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Lippman W.** Public Opinion.- N.Y., 1934. 362 p.
2. **Даль Р.** Введение в теорию демократии.- М.,1992. 158с.
3. **Токвиль А.** Демократия в Америке.- М., 1995. 67с.

Н.К. БАГДАСАРЯН

ВОЗДЕЙСТВИЕ ИНФОРМАЦИОННОЙ РЕВОЛЮЦИИ НА ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ

Информационная революция во второй половине XX века имела свое влияние также и на политические процессы. Новые коммуникативные и информационные способы, ставшие активными участниками политических процессов, не только качественно изменили, но и сильно разбили представления и стереотипы в политических процессах.

Ключевые слова: информационные и коммуникативные средства, электронное сообщество, политические процессы, дезинформация, обмен информацией.

N.K. BAGHDASARYAN

THE IMPACT OF INFORMATION REVOLUTION ON THE POLITICAL PROCESSES

The information revolution of the second half of the 20th centurey had an impact on the political processes. New means of information and cooperation, being actively involved in the political process, not only changed the quality of many perceptions and stereotypes, but also destroyed them.

***Keywords*:** information and cooperation means, electronic community, political processes, misinformation, information exchange.